ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի
2022 թվականի հունիսի 27-ի N 14-1/27.06.22 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ
Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/1-ԲՊ-01/27.06.22

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **6000 լիտր (կտրոնով) պրեմիում բենզինի** մատակարարման պայմանագիր:

Մատակարարումը կկատարվի կտրոնով լիցքավորման ձևով՝ պայմանագիրը կնքելուց հետո 2022 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ»ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով կամ Էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային1 հասցեում, **2022թ. հուլիսի 06-ին ժամը 11^{00}-ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Մարգարյանին, հեռ.՝+223 6-07-12:

Պատվիրատու՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ

ՀՐԱՎԵՐ

1. Սույն հրավերը տրամադրվում է ՀրազՁԷԿ ԲԲԸ կողմից 2022թ. հունիսի 28-ին տեղեկագրում հրապարակված ՀՁ-ԳՀ-ԱՊՁԲ/1-ԲՊ-01/27.06.22 ծածկագրով գնման գնանշման հարցման մասին հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը ՀՁ-ԳՀ-ԱՊՁԲ/1-ԲՊ-01/27.06.22

3. Գնման առարկայի բնութագիրը՝ **6000 լիտր (կտրոնով) պրեմիում բենզի:**

4. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

5. Մրցույթն իրականացվում է 1 փուլով, մատակարարումն՝ ըստ Կողմերի համաձայնեցրած ժամանակացույցի և հայտարարված ժամկետում՝ պայմանագիրը կնքելու օրվանից 1 ամսվա ընթացքում:

6. Հայտով նարկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

7. Հայտով նարկայացվող առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը ՀրազՁԷԿ-ի տարածք:

8. Հայտերը կբացվեն 2022թ. հուլիսի 06-ին ժամը11^{00}-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության, հասցեն՝ ք. Հրազդան, 2302, Գործարանային 1:

9. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման դրույթներով:

10. Պայամանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝ Է.Սանամյան